



Ավետիք Իսահակյան

Ձայնըս հնչում է խավարի խորքից

Ձայնըս հնչում է խավարի խորքից, -
Գըթա՛, հայտնվի՛ր սո՛ւրբ ճըշմարտություն.
Ես քեզ եմ փնտրել իմ կյանքի չենքից,
Եվ տե՛ս, քարացա անհուն տանջանքում:

Բյուր ուղիներով ես դիմեցի քեզ,
Քո հետքն ու շուքը նույնիսկ չըգրտա.
Տե՛ս, սըտության մեջ, մոլորության մեջ
Ջախջախվեց կյանքըս ... ու դու չե՞ս գըթա ...

Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ,
Բայց հավատում եմ – ունիս գոյություն.
Բայց էլ չըմնաց մի ուղի անհայտ. –
Ա՛խ, երևացի՛ր, մեծ ճշմարտություն՝ ...

Եվ ես ուժ կառնիմ, կըգոտեպնդվիմ,
Ցուպըս կըվերցնեմ և ճամփա կերթամ,
Լույսըդ կավետեմ խավար աշխարհին,
Մոլոր մարդկության վե՛հ կյանքըդ կուտամ ...

1900

Յյուրիխ